## 42. ԱՇԿԱՎ ՏԱԼԸ

*Գյո̈ւլգյա̈զ բիբին քյըեցալ ար մին օրե հրեվան շենը։ Կյալիս ըրտերեն մաշավըն ար կյամ։ Տըեսնում ա մին լա̈վ արտ, հասկերը էրգյան-էրգյան։ Տա ։ ուրա̈նց արտըն ա ինում։*

*Ասում ա.— Պա՛հ, պա՛հ, փա̈՛հ, էս հի՞նչ լավ արտ ա, տարը մըեռածըտ հո՞մց ա փսալ, ըհա աստուծ մաշին նստած ինի։*

*Ուրա̈նց շնա̈ցե մին տղա խոխա նհետը կյա̈լիս ա ինում։ Ասում ա.— Գյուլգյա̈զ հա̈սի, ծեր արտըն ա է՛, խե՞ ուշունց ըս տամ։*

*Գյո̈ւլգյա̈զ հա̈սին իրեսեն խըշըրկնքում ա, թա.— Հա՞, յըես էլ ասիմ, խե՞ ստի հասկերը կուճուր-կուճուր ա, փիս ա, ետնան ուրան մըթկըմը ասըմ ա. «Իստի ասիմ, վեր աշկավ չի տան, վո՛ւյ, մունք աշկ յոր օնող ընք, աստուծ վեչ անի, վեր մըեզ աշկավ տան, փիս աշկը տրաքե, ցըրեվ կյտ, եր տեռնա»։*